

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՏԻՐԱՅՈՒ, Մբ.—Կ'ապրէր 1673ին, Ս. Յակոբի մէջ իբր միաբան: Փարիզի Ազգ. Մատենադարանին մէջ գտնուած Հաւաքածոյ Բժշկութեան եւ Աստուածաբանութեան ձեռագրին վերջին մասը ընդօրինակուած է Երուսաղէմի մէջ, այս յիշատակարանին համաձայն, «գրեցաւ Տնօրինականքն Քրիստոսի ի ս. քաղաքն Երուսաղէմ. Թվին Հայոց ՌՃԻԲ (=1673) ամին, ի վայելումն տիրացու Աստուածատուրին»։ (CMA. էջ 167)։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՔՀ. ՔԷՖԷՅԻ.—Պաշտօնեայ կամ գործակալ Ս. Յակոբի Քէֆէի մէջ։ Ստեփանոս Թօխատեցի իր Գովաւանութիւն Կախացու Բանակայի վրայ քերթուածով՝ հետեւեալ տողերը կ'ընծայէ մօտ. Աստուածատուր քհ. ի։

«Տէր Մղտեսի Աստուածատուր,

Սբ. Յակոբայ ես սպասաւոր,

Անունդ անեղ և զօրաւոր,

Զարմանալի և փառաւոր»։

(Ազգր. հան. Գիրք. IX 1902, էջ 71)։

ԱՏՈՎՄ ՎՐԴ. ԱՌԱՔԵԼԵԱՆ, ԿՈՐԻՑԻ, (ԿՈՎԿԱՍ), Մբ.—Մ. 1889 Ձ. 1922, Ժամարար Յոպպէի 1923-1924։

ԱՏՈՎՄ ԳՐԻԶ.—Ս. Յակոբի վանքին մէջ 1549ին կ'ընդօրինակէ Հարսնց Վարդ մը Մշոյ Ս. Կարապետ վանքին համար։ Զեւազրին ստացողն է Թորոս եպս. «...գրեցաւ սա ի թուականիս Հայոց ԶԳԸ (=1549), ի ս. քաղաքն Երուսաղէմ. ի յառաջնորդութեան Գլակայ վանացն Տ. Աստուածատուր եպս.ին և Տ. Անդրէասին եղբորորդւոյ նորին, որ այսմ ամի և սա եղև եպիսկոպոս»։ (Փառապանագիրք էջ 81)։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱԲ. ՇԱՄԲԵՅԻ, (ԳՈՂԹՆ) Մբ.—Գրած է յիշատակարան մը (ՄԶ. Թ. 89), ուր կը պատմէ թէ, 1610ին, Գրեգոր Պարոնտէրի օրով, Ս. Յակոբի վանքին 20,000 մատչիլ պարտքը ինչպէս վճարուեցաւ։ Նոյն յիշատակարանին վերջը իր մասին կը գրէ հետեւեալը.

«Ռըստակէս կապող յայսմ գրի,

Որ եմ տեղեաւըս Շամբեցի.

Հող և փոշի ամենայնի,